ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> 07 2025թ. ՆՄՈ/ 722 -Ա

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԷԴՎԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Էդվարդ Պետրոսյանի 2025 թվականի հուլիսի 21-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Էդվարդ Պետրոսյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի օգոստոսի 4-ից սեպտեմբերի 5-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

2. Էդվարդ Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գասպար Եղիազարյանին:
3. Էդվարդ Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի սեպտեմբերի 8-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-23 16:41:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԴ-ի կողմից

ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ